

րին ականջ դնէր: Միևնոյն ժամանակ նա լիովին գնահատում էր իւր նախորդի գործերն և ամենայն փութով նկրտում, որ Սիմէօն կաթողիկոսի սահմանած կարգ ու կանոնն եկեղեցու ներքին վարչութեան մէջ ամրանայ և ռուսաց Վայսերական Տան հետ սկսուած յարաբերութիւնները սերտանան: Իբրև իւր հօտի մտաւոր և բարոյական կրթութեան նախանձախնդիր՝ նա ոչ նիւթական միջոց էր խնայում, ոչ էլ ջանք հայերէն գրքեր տպագրելու համար: Սիմէօն կաթողիկոսի «Պարտալճարի» տըպագրութեան յառաջիկայ աւարտումն և տպաթէ «Ժամագրքի» տպագրութեան ընդ փոյթ ձեռնարկելու դիտաւորութիւնը Յովսէփ սրբազանին յայտնելիս՝ Ղուկաս հայրապետը, ի միջի այլոց, բողոքում էր Պետերբուրգում բացուած տպարանի մէջ գրքեր տպելու առաջարկի դէմ, ասելով, թէ «տպագրատուն ըստ մերում լեզուի գոյ և յայլ տեղիս... սակայն որպէս էր ջանք լուսահոգոյն, նոյնպէս և մեր ամենեցուն այն է ջանք և գիտումըն, զի ի սրբոյ Աթոռոյս ելցէ այսպիսի ինչ, առ նորա ի գովեստ և ի բարձրութիւն սմին և անուան լուսահոգւոյն, որ զտպագրատունս զայս հաստատեաց. զայսու որպէս զանց աւարեալ յայլ տեղիս տրկցուք»: «Աւրիշ տեղեր էլ հայոց տպարաններ կան, բայց նա, իւր նախորդի նման, աշխատում է, որ գրքերն էջմիածնում տպուին, որպէս զի թէ Մայր Աթոռի բարոյական հեղինակութիւնը բարձրանայ և թէ տպարանը հիմնարկողի յիշատակը մեծարուի»:

Կաթողիկոսի այդ հոգատարութիւնը հայերի մէջ կրթութիւն և գիտութիւն տարածելու մասին, ամեն ուրեք համակրանք գտաւ: Ղուկաս հայրապետի ընդարձակ թղթակցութիւնը ¹⁾ Յովսէփ սրբազանի և մանաւանդ Յ. Լազարևի, Մարգար և Փիլիպպոս Մանուչարեան եղբայրների (Ռուսաստանում) և Շամիր խանի հետ (Հնդկաստանում) բացայայտ ցոյց են տալիս, թէ սրբան էին հետաքրքրւում այն դարու լուսամիտ հայերն ազգային դպրոցներ հիմնելու և հայերէն գրքեր լոյս հանելու և տարածելու կարևոր խնդրով:

Այսպէս 17 յունուարի 1783 ամի Մանուչարին ուղղած գրութեան մէջ Ղուկաս հայրապետն ասում է. «Գալով նոր

¹⁾ 17 յունուարի 1783 ամին նա գրում է Յովսէփ արքեպիսկոպոսին, թէ նա միանուագ 100 նամակ է արձակել: «Իրան Պատմութեան Հայոց», հատ. Գ. երես 263: